



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Երևան, Կառավարական փուն 1

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(«Վաղարշ» ՍՊ ընկերության 01.03.2017թ. վարչական բողոքը
մերժելու մասին)

Ք. ԵՐԵՎԱՆ

«29» ՄԱՐՏԻ 2017թ.

ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողովը՝ ի դեմս հանձնաժողովի նախագահ ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի, ուսումնասիրելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/1 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ «Վաղարշ» ՍՊ ընկերության 01.03.2017թ.-ի բողոքը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Բողոքի էությունը և ներկայացված պահանջը.

«Վաղարշ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ Բողոք բերած անձ) 01.03.2017թ.-ին բողոք է ներկայացրել ՀՀ տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով (այսուհետ՝ նաև Հանձնաժողով)՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Գանգատարկման հանձնաժողով)՝ 23.12.2016թ.-ի թիվ 42/1 և ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության (այսուհետ՝ նաև Վարչություն) 04.11.2016թ. թիվ 033832 որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

Բողոքը մուտքագրվել է Հանձնաժողովի քարտուղարություն 01.03.2017թ.-ին:

Բողոք բերած անձը հայտնել է, որ 24.11.2016թ. թիվ 19660-16 գրությամբ Գանգատարկման հանձնաժողովին բողոքարկել է Վարչության՝ հարկ վճարողի գույքի

(այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին 04.11.2016թ. թիվ 033832 որոշման (այսուհետ՝ նաև Որոշում) իրավաչափությունը:

Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/1 որոշմամբ գանգատը մերժվել է և Որոշումը թողնվել է անփոփոխ:

Բողոք բերած անձը որպես բողոքի փաստական և իրավական հիմքեր նշել է, որ՝

- Ընկերությունը Գանգատարկման հանձնաժողովի կողմից պատշաճ չի ծանուցվել գանգատարկման վարույթի հարուցման և դրա իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին: Մասնավորապես, Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ. նիստի մասին Ընկերությունը տեղեկացվել է հեռախոսազանգի միջոցով հենց նույն օրը՝ առավոտյան 10:00-ից հետո: Արդյունքում, խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների պահանջները:

- Գանգատարկման հանձնաժողովն ըստ էության չի անդրադարձել Բողոք բերած անձի կողմից գանգատում նշված՝ իրավական դրույթներից բխող նկատառումներին և բավարարվել է միայն նշելով, որ հարկային մարմնի գործողությունները համապատասխանում են օրենքի պահանջներին: Մասնավորապես, Գանգատարկման հանձնաժողովի որոշման մեջ նշվել է, որ բոլոր իրավական հիմքերն ու հիմնավորումներն առկա են՝ հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու որոշում կայացնելու համար: Մինչդեռ, Գանգատարկման հանձնաժողովի որոշման մեջ չի մատնանշվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30.2-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ նախատեսված՝ հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և հարկ վճարողի կողմից վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու մասին ենթադրությունը հիմնավորող որևէ ապացույց, մինչդեռ նշված հանգամանքը հարկային մարմնի ղեկավարի կողմից հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու հիմք է հանդիսացել:

- Հիմք ընդունելով Օրենքի 30.2-րդ հոդվածի 3-րդ պարբերության պահանջը՝ հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը կարող է կիրառվել **միայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության չափով և դրա կատարումն ապահովելու համար**: Մինչդեռ, տվյալ դեպքում արգելադրվել է Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը,

տրանսպորտային միջոցները, ՀՀ բոլոր առևտրային բանկերում առկա բանկային հաշվեհամարները, ինչպես նաև դրամարկղը:

- Ընկերությանը չի տրամադրվել Որոշման հիմքում դրված հանձնարարագիրը, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 30.2-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջն առ այն, որ արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են արգելանք դնելու իրավական հիմքերը, ինչպես նաև արգելանք դնելիս հանձնարարագրի պատճենը ներկայացվում է հարկ վճարողին:

- Խախտվել է նաև Օրենքի 30.2-րդ հոդվածի 15-րդ պարբերության պահանջն առ այն, որ հարկ վճարողի այլ գույքի վրա արգելանք դնելիս կազմվում է արձանագրություն: Արձանագրությունում կամ դրա հավելվածում նկարագրվում և ըստ անվանումների նշվում են արգելադրվող գույքի անվանումը, քանակը, անհատական հատկանիշները, հաշվեկշռային արժեքները: Նշված արձանագրությունը հարկ վճարողի գույքի արգելադրման որոշման անբաժանելի մասն է: Բողոք բերած անձը նշել է, որ Ընկերությունը նման արձանագրություն չի ստացել:

- Գանգատարկման հանձնաժողովի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի և Օրենքի վերոնշյալ խախտումները հանգեցրել են նաև ՀՀ Սահմանադրության 8-րդ և 31-րդ հոդվածներով սահմանված պահանջների խախտմանը:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոք բերած անձը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիմքով **խնդրել է անվավեր ճանաչել Գանգատարկման հանձնաժողովի՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին 04.11.2016թ. թիվ 033832 որոշումն անփոփոխ թողնելու մասին 23.12.2016թ.-ի թիվ 42/1 որոշումը և Վարչության կայացրած հարկ վճարողի գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին 04.11.2016թ. թիվ 033832 որոշումը:**

2. Մասնակցի դիրքորոշումը.

Բողոք բերած անձի դիրքորոշումը հստակեցնելու նպատակով Հանձնաժողովը 2017թ.-ի մարտի 29-ին անցկացրել է լսումներ, որին ներկայացել էին Ընկերության տնօրեն Հովհաննես Վարդանյանը և լիազորված անձ Մխիթար Բեգյանը:

Վերջինս լսումների ընթացքում հայտնեց, որ իրենց դիրքորոշումը սպառիչ ներկայացված է բողոքում և բացակայում է որևէ լրացուցիչ տեղեկատվություն:

3. Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Բողոք բերած անձի և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գտնում ենք, որ սույն բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ Ընկերության կողմից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունները գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ, որի արդյունքում 20.10.2016թ.-ին կայացվել է թիվ 797/8 որոշումը՝ Ընկերությունից 4.638.795 ՀՀ դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի պետ Դ. Միլիտոնյանը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանին 01.11.2016թ. ուղղված թիվ 11-13/[1233186]-16 զեկուցագրով խնդրել է տրամադրել Ընկերության գույքի վրա արգելանք դնելու մասին հարկային մարմնի ղեկավարի հանձնարարագիր: Զեկուցագրում նշվել է, որ ուսումնասիրելով հարկ վճարողի հարկային գործը, հաշվի առնելով հարկերը ժամանակին չվճարելու հանգամանքը, իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռքբերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել թիվ 797/8 որոշման համար անհրաժեշտ գույքը:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 04.11.2016թ. հրապարակվել է թիվ 033832 հանձնարարագիրը՝ 4.638.795 ՀՀ դրամ չկատարված հարկային պարտավորությունների չափով Ընկերությանը պատկանող գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ:

- 04.11.2016թ. թիվ 033832 հանձնարարագրի հիման վրա ՀՀ ԿԱ ՊԵԿ անձնակազմի իրավաբանական վարչության 8-րդ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ղազարյանի և առաջատար մասնագետ Ա. Գալստյանի կողմից 04.11.2016թ. կայացվել է թիվ 033832 որոշումը՝ Ընկերության գույքի վրա արգելանք դնելու մասին:

Մասնավորապես, վերոնշյալ որոշմամբ սահմանվել է, որ հաշվի առնելով հարկերը ժամանակին չվճարելու հանգամանքը, իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռքբերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է

թաքցնել, փչացնել կամ սպառել թիվ 797/8 որոշման համար անհրաժեշտ գույքը, որոշվել է 4.638.795 ՀՀ դրամ գումարի չափով արգելանք դնել Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վրա, ՀՀ առևտրային բոլոր բանկերում առկա բանկային հաշվեհամարների, ինչպես նաև դրամարկղի վրա: Ընկերությանն արգելվել է արգելադրված գույքն օգտագործելը և տնօրինելը:

- ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված վարչական գործում առկա է փոստային կտրոն, որով ըստ վարչական մարմնի, հիմնավորվում է 04.11.2016թ. թիվ 033832 հանձնարարագրի և Որոշման օրինակները 05.11.2016թ. փոստային ծառայության միջոցով Ընկերությանն ուղարկելու և 16.11.2016թ. վերջինիս կողմից ստացված լինելու վերաբերյալ:

- Ընկերությունը 24.11.2016թ.-ին Գանգատարկման հանձնաժողովին ներկայացրել է բողոք՝ Ընկերության գույքի (այդ թվում դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու մասին Վարչության 04.11.2016թ. թիվ 033832 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ:

- Գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/1 որոշմամբ Ընկերության գանգատը մերժվել է, Վարչության 04.11.2016թ. թիվ 033832 որոշումը թողնվել է անփոփոխ:

4. Պատճառաբանություններ և եզրահանգումներ.

Բողոքի և դրա քննարկման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ **բողոքն անհիմն է և ենթակա է մերժման** հետևյալ հիմնավորմամբ.

Սույն գործով Հանձնաժողովը նախ և առաջ հարկ է համարում անդրադառնալ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2.-րդ հոդվածի կարգավորումների ընդհանուր նպատակներին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրական դատարանը 30.01.2013թ. թիվ ՍԴՈ-1073 որոշմամբ անդրադառնալով նշված հոդվածի կարգավորումներին և դրանց սահմանադրականությանը, ամրագրել է. «Այսպիսով, արձանագրելով, մի դեպքում՝ սեփականության իրավունքի իրացման սահմանադրորեն ամրագրված սկզբունքներն ու դրանց կիրառման օրենսդրական շրջանակները, մյուս դեպքում՝ օրենքով սահմանված հարկեր մուծելու՝ անձի սահմանադրական պարտականության կատարման անխուսափելիությունը, սահմանադրական դատարանը կարևորում է վերջինիս

իրավակարգավորման այնպիսի միջոցների ու ձևերի սահմանումն ու կիրառումը, որոնց պարագայում իրավունքը չենթարկվի անիրավաչափ (անհամաչափ) սահմանափակման, իսկ օրենքով նախատեսված սահմանափակումները հետապնդեն սահմանադրորեն արդարացված նպատակ և որևէ կերպ չգերազանցեն Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակները:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով **վիճարկվող նորմերով նախատեսված կարգավորման որոշակիորեն արտահայտված իրավական կոնկրետ նպատակը պետական լիազոր մարմնի կողմից վերահսկվող անձի (ֆիզիկական և իրավաբանական) կողմից իր սուբյեկտիվ պարտականության կատարումն ապահովելն է, որն ունի սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակություն, քանի որ կոչված է երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 45, 48, 83.5, 89 և 106-րդ հոդվածներում նախանշված պատվիրանների կատարումը: Այդ նպատակի իրականացման օրենքով թույլատրելի միջոցը, ըստ վիճարկվող նորմերի իրավական բովանդակության, անձի գույքային իրավունքների սահմանափակումն է, որը կարող է դրսևորվել անձի պարտավորությունների կատարմանը համարժեք գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու արգելքի ժամանակավոր կիրառմամբ:** Այսինքն՝ սույն գործով վիճարկվող նորմերում ամրագրված իրավակարգավորման գլխավոր միջոցը (մեթոդը) **իր պարտավորություններին համարժեք** անձի սահմանադրական իրավունքի ժամանակավոր սահմանափակմամբ նրա սահմանադրական պարտականության կատարումն ապահովելն է»:

Վերոհիշյալ նպատակների ամրագրման տեսնակյունից Հանձնաժողովն էական է համարում այն փաստի ամրագրումը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության 20.10.2016թ.-ին կայացված թիվ 797/8 որոշմամբ սահմանվել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով Ընկերության 4.638.795 ՀՀ դրամ պարտավորությունը, որը բողոքարկված լինելու կամ Բողոք բերած անձի կողմից որևէ կերպ վիճարկվելու փաստական հանգամանք առկա չէ:

Նշվածը հիմք է տալիս եզրահանգելու, որ Բողոք բերած անձի կողմից դրսևորվում է շարունակական վարքագիծ՝ կապված հարկային պարտավորությունների կատարումից խուսափելու հետ, որի կարևորությամբ և սահմանադրորեն կանխորոշված հանրային-իրավական նշանակությամբ է պայմանավորվում հարկային մարմնի կողմից

սեփականության իրավունքի համապատասխան սահմանափակումների օրենքով թույլատրված կիրառումը:

Այս վերլուծության շրջանակներում Հանձնաժողովը՝ անդրադառնալով Բողոք բերած անձի այն փաստարկին, որ հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված և հարկ վճարողի կողմից վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը թաքցնելու, փչացնելու կամ սպառելու մասին ենթադրությունը հիմնավորող որևէ ապացույց ձեռք չի բերվել, գտնում է, որ այն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքը վարչական մարմնի կողմից արգելանքի որոշում կայացնելու հիմք դիտարկել է պարտապանի կողմից համապատասխան գործողությունների կատարման **ենթադրությունը**, ոչ թե դրա հավաստի իրականացումը, որպիսի պարագայում վարչական մարմինն իր ենթադրությունը, որին հավասարազոր է նաև «ներքին համոզում» արտահայտությունը, հիմնավորող սպառիչ ապացույցներ ձեռք բերելու պարտավորություն չունի: Ավելին, քննարկվող գործի շրջանակներում հարկային մարմինը սահմանել է, որ իր ենթադրությունը հիմնված է հարկատուի հարկային գործի ուսումնասիրության և վերջինիս կողմից պարտավորության կատարումից խուսափելու հանգամանքների վրա, որը Հանձնաժողովի գնահատմամբ կարող է դիտարկվել բավարար: Մասնավորապես, վերը անդրադառնալով հարկային պարտավորություններ կրելու և դրանք շարունակաբար չկատարելու փաստին՝ հաշվի առնելով 20.10.2016թ.-ին կայացված թիվ 797/8 որոշումը չբողոքարկելու պարագայում դրանով սահմանված պարտավորությունը չկատարելու հանգամանքը, Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ փաստական հանգամանքերը բավարար են համապատասխան ենթադրության ձևավորման համար:

Հանձնաժողովը գտնում է, որ անհիմն է նաև Բողոք բերած անձի փաստարկն առ այն, որ Ընկերությանը չի տրամադրվել Որոշման հիմքում դրված հանձնարարագիրը, ինչի արդյունքում խախտվել է Օրենքի 30.2-րդ հոդվածի 4-րդ պարբերության պահանջն առ այն, որ արգելանք դնելու մասին հանձնարարագրում նշվում են արգելանք դնելու իրավական հիմքերը, ինչպես նաև արգելանք դնելիս հանձնարարագրի պատճենը ներկայացվում է հարկ վճարողին:

Մասնավորապես, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից Հանձնաժողովին տրամադրված վարչական գործում առկա է փոստային կտրոն, որով հիմնավորվում է 04.11.2016թ. թիվ 033832 հանձնարարագրի և Որոշման օրինակները 05.11.2016թ. փոստային ծառայության

միջոցով Ընկերությանն ուղարկելու և 16.11.2016թ.-ին վերջինիս կողմից ստացված լինելու հանգամանքը: Հանձնարարագրի ուսումնասիրությունից հետևում է, որ դրանում հստակ նշված է նաև իրավական հիմքը, այն է՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2.-րդ հոդվածը:

Անդրադառնալով հարկային մարմնի կողմից արձանագրություն չկազմելու վերաբերյալ Բողոք բերած անձի փաստարկին, Հանձնաժողովը գտնում է, որ այդ տեսանկյունից էական է հանդիսանում այն գույքերի իրավական ռեժիմի առանձնահատկությունների քննարկումը, որոնց վրա քննարկվող գործի շրջանակներում հարկային մարմնի կողմից դրվել է արգելանք:

Մասնավորապես, արգելանքի որոշման համաձայն, արգելանք է դրվել «Վաղարշ» ՍՊԸ-ին պատկանող անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների, ՀՀ առևտրային բանկերում առկա բանկային հաշվեհամարների, ինչպես նաև դրամարկղի վրա՝ 4.638.795 ՀՀ դրամի չափով:

Հիմնական պահանջը, որը հարկատուի սեփականության իրավունքի սահմանափակման տեսանկյունից Հանձնաժողովը գնահատում է որպես էական, կայանում է նրանում, որ արգելանքը պետք է կիրառվի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չափով, որն իր հերթին ձեռք է բերում առանձնահատկություններ՝ կախված գույքի տեսակից:

Մասնավորապես, բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման դեպքում, որպիսի պարագայում կարող է հստակ արգելադրվել պարտավորության չափին համապատասխան գումար, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.2.-րդ հոդվածի 9-րդ պարբերությամբ սահմանվել է հատուկ կանոնակարգում, համաձայն որի՝ *«Այն դեպքում, երբ բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների արգելադրման արդյունքում արգելադրվում է հարկ վճարողի մեկից ավելի բանկային հաշիվներում առկա դրամական միջոցները, և արգելադրված ընդհանուր գումարը գերազանցում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության չափը, կամ բանկային հաշիվներից որևէ մեկին առկա դրամական միջոցներով ապահովվում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության չափը, ապա **առևտրային բանկն իրավունք ունի հարկ վճարողի հանձնարարության հիման վրա փրամադրելու փեղեկատվություն տվյալ բանկում վարվող հարկ վճարողին պատկանող բանկային հաշիվներում առկա պարտավորության չափով արգելադրված գումարի վերաբերյալ: Նշված հանձնարարությունը ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում,***

առևտրային բանկը պարտավոր է տեղեկատվություն տրամադրել հարկ վճարողի բանկային հաշիվները սպասարկող մյուս առևտրային բանկերին և հարկային մարմնին՝ իր մոտ վարվող տվյալ հարկ վճարողին պատկանող բանկային հաշիվներում առկա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության չափով արգելադրված գումարի վերաբերյալ: Նշված տեղեկատվությունը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած ձևով»:

Նշված կարգավորմամբ կարևորվում է երկու հանգամանք, այն է՝ դրամական միջոցների դեպքում հարկատուի մյուս բանկային հաշիվները կարող են ազատվել արգելանքից, քանի որ ապահովված է կոնկրետ չափով գումարի բռնագանձման հնարավորությունը և նշվածը իրականացվում է հարկ վճարողի հանձնարարության հիման վրա, որի արդյունքում բանկը համապատասխան տեղեկատվություն է տարամադրում նաև հարկային մարմնին: Սույն գործում բացակայում է նման փաստական հանգամանք, որի առկայության պարագայում կարելի էր քննարկման առարկա դարձնել հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չափով ապահովման առկայությամբ հարկային մարմնի կողմից այլ գույքերի նկատմամբ սահմանված սահմանափակումների հետագա պահպանման հիմնավորվածությունը:

Ինչ վերաբերում է այլ գույքի՝ ցանկացած անշարժ կամ շարժական, արգելադրմանը, Հանձնաժողովը գտնում է, որ դրանց նկատմամբ չի կարող ապահովվել որոշակի՝ պարտավորության չափին համապատասխան, մասով արգելանք կիրառելու հնարավորությունը՝ առանց ամբողջ գույքի նկատմամբ այն տարածելու, որպիսի պարագայում հարկային մարմնի պարտավորությունը սահմանափակվում է զուտ որոշման մեջ նշված չափն ամրագրելու գործողությամբ, ինչը և քննարկվող գործի շրջանակներում ապահովվել է հարկային մարմնի կողմից:

Ընդ որում, Հանձնաժողովը կարևորում է նաև այն փաստը, որ քննարկվող գործի շրջանակներում արգելանք է դրվել անշարժ գույքի և տրանսպորտային միջոցների վրա, որոնց նկատմամբ ինչպես իրավունքները, այնպես էլ սահմանափակումները ենթակա են պետական գրանցման: Հետևաբար, արգելադրման փաստացի իրականացումը վերապահված է գրանցումն իրականացնող մարմիններին, որպիսի պարագայում առավել քան էական է հանդիսանում հարկային մարմնի կողմից նշված մարմիններին ուղարկվող որոշմամբ պարտավորության չափի ամրագրումը:

Հանձնաժողովը գտնում է, որ հարկային մարմնի որոշմամբ սահմանվել են նաև սահմանափակման տեսակները և ծավալները, այն է՝ արգելադրված գույքն օգտագործելը և տնօրինելը:

Ուսումնասիրելով արձանագրությանը օրենքով ներկայացված պահանջները, Հանձնաժողովը գտնում է, որ դրանք չեն կարող պահպանվել արգելանք կիրառելու բոլոր դեպքերում, հաշվի առնելով օրինակ՝ ֆիզիկական անձին պատկանող գույքի հաշվեկշռային արժեքի գոյություն չունենալը, կամ օրինակ՝ պետական գրանցում ստացած գույքերի նկատմամբ արգելանք կիրառելու դեպքերում, քանի որ տվյալ գույքերի նկարագրման օրենքով սահմանված պահանջի նպատակը արգելադրված գույքի անհատականացումն է, որի անհրաժեշտությունը վերանում է, քանզի նման գրանցումն արդեն իսկ ներառում է գույքի բավարար անհատականացման պահանջներ, օրինակ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Ի վերջո, Հանձնաժողովն անդրադառնալով Գանգատարկման հանձնաժողովի կողմից վարույթի հարուցման և նիստի մասին պատշաճ ծանուցված չլինելու վերաբերյալ Բողոք բերած անձի փաստարկներին, գտնում է, որ հարուցման մասին ծանուցման մասով Գանգատարկման հանձնաժողովի կողմից խախտվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին:

Սակայն, Հանձնաժողովը գտնում է, որ այն չի կարող ազդել Գանգատարկման որոշման իրավաչափության վրա, քանի որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է վարույթի հարուցված լինելու կանխավարկածը դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու պահից, եթե այն չի վերադարձվել կամ վերահասցեագրվել:

Ինչ վերաբերում է նիստի վերաբերյալ ծանուցմանը, Հանձնաժողովը գտնում է, որ Բողոք բերած անձի կողմից այն փաստի ընդունումը, որ վերջինս տեղեկացված եղել է դրա անցկացման մասին, ինչպես նաև լսումների մասին ծանուցելու ժամկետների օրենսդրական կարգավորման բացակայությունը, հանգեցնում են բողոքի այդ մասով ևս անհիմն լինելուն:

Վերոգրյալի արդյունքում՝ ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի, 1-ին մասի «բ» կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վաղարշ» ՍՊ ընկերության 01.03.2017թ.-ի բողոքը **մերժել**. անփոփոխ թողնել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 23.12.2016թ.-ի թիվ 42/1 որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ակտի ընդունման մասին վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ